Արձանագրություն N 2

«ԵՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

04.09.2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ծ. Մկրտչյան, Է. Թորոսյան, Ռ. Մնացականյան, Ա. Գյուրջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. Տեղեկություններ «ԵՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ռ. Հովհաննիսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակցի մասին

(Ռ. Հովհաննիսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

h/h	Մասնակցի անվանումը
1	«Տերմինալ Կոմպանիա» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ռ. Հովհաննիսյան)

3.1 Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Տերմինալ Կոմպանիա» ՍՊԸ	10000000	9930000	-	9930000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ռ. Հովհաննիսյան)

4.1 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Տերմինալ Կոմպանիա» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ռ. Հովհաննիսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տերմինալ Կոմպանիա» ՍՊԸ, որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ. Հովհաննիսյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 05.09.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 05.09.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Հովհաննիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ռ. Հովհաննիսյան
Անդամներ՝		Ծ. Մկրտչյան
		Է. Թորոսյան
		Ռ. Մնացականյան
		Ա. Գյուրջյան
Քարտուղար՝		Վ.Մեժունց